

ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

2013 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 22.10.2012թ. թիվ 2389-Ա «Հայաստանի Հանրապետության մարզային բժշկական կազմակերպություններին ըստ բժշկական օգնության տեսակների Երևան քաղաքում տեղակայված կցվող բժշկական կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» հրամանի ՀՀ Արագածոտնի մարզի բժշկական կենտրոններում 2012թ. դեկտեմբեր ամսից մինչև 2013 թվականի ապրիլ ամիսը կազմակերպվել են Բաց դռների օրեր Երևանի “Նորք Մարաշ” ԲԿ, “Ա.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոնի”, “Կլինիկական թիվ 6 հիվանդանոցի” և “Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ” ՓԲԸ-ի մասնագետների կողմից: Կատարված բժշկախորհրդատվական ընդունելության ընթացքում սպասարկվել է 523 մարդ:

“Իզմիրյան բժշկական կենտրոն” կողմից կազմակերպվել է Բաց դռների օրեր մարզի Ապարան և Բյուրական համայնքներում: Սպասարկվել է մոտ 500 քաղաքացի: Կազմակերպվել է սեմինար պարապմունքներ բժիշկների համար:

Հոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառված անձանց մասին, ամսական կտրվածքով բժշկական կենտրոնների կողմից ներկայացվում է տեղեկատվություն ՀՀ ոստիկանության պետավտոտեսչություն:

Հիմք ընդունելով ՀՀ Առողջապահության նախարարի 31.01.2011թ. թիվ 97-Ա՝ „Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների ներդրման աշխատանքները կազմակերպելու, համակարգելու և շարունակական հսկողություն իրականացնելու մասին, հրամանը մարզի բժշկական կազմակերպություններում շարունակվում է բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմը և իրականացվում է շարունակական հսկողություն՝ աշխատանքները կազմակերպելու, համակարգելու, ինչպես նաև գործընթացի նկատմամբ:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժփիմնարկների 2013թ. գլոբալ բյուջեն կազմում 1322170300 դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով 853124800 դրամ, հիվանդանոցային ծառայության գծով 469045500 դրամ: 2013 թվականի 9 ամսվա դրությամբ մարզի բուժփիմնարկների կատարողականը կազմում է մոտ 962519000 միլիոն դրամ: Գլոբալ բյուջեյի հաշվարկով 9 ամիսների դրությամբ 100%-ով ստացվել է կատարողականի գումարը:

Մարզպետարանի ենթակայության բժշկական կազմակերպություններում 2013 թվականի 9 ամիսների դրությամբ վճարովի ծառայության և այլ մուտքերը կազմել են 91408000 դրամ, որից Աշտարակի ԲԿ՝ 32400000 մլն. դրամ, Ապարանի ԲԿ՝ 33000000 մլն. դրամ, Թալինի ԲԿ՝ 21700000 դրամ, Ծաղկահովիտի ԲԿ՝ 4200000 մլն դրամ:

2013թ.-ի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը ստացել է 655 գրություններ և քաղաքացիների դիմումներ, ՀՀ Կառավարությունից, Առողջապահության նախարարությունից և այլ կազմակերպություններից, որից *առողջապահության բաժին*՝ 535, սոցիալական ապահովության բաժին՝ 120: Նախապատրաստվել և մարզպետի հաստատմանն են ներկայացվել 28 միջնորդագրերի նախագծեր՝ մարզի սոցիալապես ծանր պայմաններում գտնվող անձանց Երևանի կլինիկաներում պետական շրջանակներում անհրաժեշտ բժշկական հետազոտությունների և բուժօգնություն ստանալու համար, մարզի բուժփիմնարկներում բուժօգնություն ստանալու համար տրվել են 46 ուղեգրեր:

Մարզի սանատոր-կուրորտային բուժման կարիք ունեցող 12 անձանց ուղարկվել են ,Արզնիի առողջարան,, 13՝ ,Ջերմուկի առողջարան,, և 22՝ Աղվերանի ,Գանձաղբյուր,, առողջարաններ, տրվել է ընդամենը 47 ուղեգիր:

2013թ. ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների թիվը կազմել է 231361, որից 81672 0-18 տարեկանների, տնային կանչերի թիվը 11534, որից 0-18 տարեկանների 7697, տնային ծնունդները 0:

2013թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի ամբուլատոր-պոլիկլինիկ բուժհիմնարկներում գրանցվել և համապատասխան բուժում են ստացել՝ 160 պարբերական հիվանդներ, 1167 չարորակ նորագոյացություններով հիվանդներ, 1570 հոգեկան հիվանդներ, 341 էպիլեպսիայով հիվանդներ, 14 ոչ շաքարային դիաբետով հիվանդներ, 1981 շաքարային դիաբետով հիվանդներ՝ որից 443 ինսուլինակախյալ, 1538 ոչ ինսուլինակախյալ:

2013թ. 10 ամիսների ընթացքում, սահմանված ժամկետներում մարզի բուժհաստատություններին է բաշխվել ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով գնված 45011856.62 հազար դրամի և հումանիտար ճանապարհով ստացված 27448460 հազար դրամի դեղորայք:

Հիվանդանոցային բուժօգնությունը մարզի տարածքում կատարվում է 4 բժշկական և 2 առողջության կենտրոններում: Ստացիոնար բուժօգնություն և սպասարկում ստացել են 4139 հիվանդներ, որոնցից 3872 ընդգրկվել են պետական պատվերի շրջանակներ: Գրանցվել է շտապ օգնության 8791 կանչ: Ծնունդները 2009թ.՝ 2030, 2010թ. 2157, 2011թ. 1922, 2012թ. 993, 2013թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ 848:

Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում իրականացնում են երեք տարածաշրջանային բժշկական հանձնաժողովները, որոնք ապահովված են համապատասխան վերապատրաստում անցած բժշկական կադրերով, իսկ բուժհիմնարկները անհրաժեշտ սարքավորումներով:

2013թ. գարնանային և ձմեռային զորակոչերին վարչությունը ներկայացրել է զորակոչային բժշկական հանձնաժողովների կազմը և կազմակերպել է հանձնաժողովի կողմից հայտնաբերված հիվանդ պատանիների բուժօգնությունը մարզի բուժհիմնարկներում: Գարնանային զորակոչից տարկետում ստացած հիվանդ պատանիների բուժօգնությունը մարզի բուժհիմնարկներում կազմակերպելու համար տրվել են հանձնարարականներ:

2013թ. ընթացքում կազմակերպված մասսայական միջոցառումների ժամանակ վարչության կողմից կազմակերպվել է բնակչությանը և մասնակիցներին շտապ բուժօգնության մատուցման գործընթացը:

Արագաճոտնի մարզի տարածքում պարբերաբար իրականացվում են հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով: Այս կապակցությամբ բարձրացված բոլոր հարցերը մարզպետի հանձնարարությամբ նախապատրաստվել և մանրամասն քննարկվել են մարզպետի մոտ անցկացված խորհրդակցություններում, մարզխորհրդի նիստերում և ստացել համապատասխան լուծում մարզում հակահամաճարակային և սանիտարահիգիենիկ միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար:

Ծաղկահովիտի ԲԿ-ի թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքներում երկու հիվանդասենյակների վերանորոգվել է “Դիակոնիա” կազմակերպության կողմից:

Բժշկական կենտրոնի միջոցներով կատարվել է՝ թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքներում չորս հիվանդասենյակների վերանորոգում, դիահերձարանի վերանորոգում, արտաքին լուսավորության և միջանցքների լուսավորության վերականգնում, պատուհանների կոտրված ապակիների փոխարինում, որոշ հիվանդասենյակների, գործող ջրագծերի, կոյուղագծերի, սանտեխնիկայի, հոսանքի լարերի փոխարինում, տնօրենի ընդունարանի, աշխատասենյակի, հանգստի սենյակի, սանհանգույցի կոսմետիկ վերանորոգում:

“Քանոնթերփարթ Ինթերնեյշնլ” Ամերիկյան մարդասիրական կազմակերպության կողմից տրամադրվել է բուժօգնության, բժշկական արտահագուստի, գործիքներ:

Թալինի ԲԿ World Vision Armenia կազմակերպության կողմից որպես մարդասիրական օգնություն ստացվել տարբեր տեսակի ապրանքներ 5674.0 հազար դրամի դեղորայք 585.0 հազար դրամի: Գործարկվել է արևային ջրատաքացուցիչ 7321.4 հազար դրամի չափով: AMQOR-ից ստացվել է բժշկական պարագաներ 134.3 հազար դրամի և Քանոնթերփարթ Ինթերնեյշնլ կազմակերպությունից տարբեր բժշկական պարագաներ:

Ապարանի ԲԿ “Մալաթիա” բժշկական կենտրոնի կողմից հատկացվել է կոմպյուտերային տոմոգրաֆիայի ապարատ:

Ներքին Բազմաբերդի ԲԱ կատարվել է վերանորոգման աշխատանքներ Ն. Բազմաբերդի բժշկական ամբուլատորիայի շենքի երկրորդ և առաջին հարկերում: Ստացվել է բժշկական սարքավորումներ և գույք՝ „ՇԵՆ“, կազմակերպության կողմից՝ 2768.3 դրամի, World Vision Armenia կողմից 160000 դրամի չափով:

Բյուրականի ԲԱ գյուղապետարանի կողմից փոխվել է պատուհանները, շենքին հարակից կառուցվել է պատվաստումների սենյակ:

Կարբիի ԲԱ-ում կանադահայ բարերար Մարգար Շարապխանյանի միջոցներով կատարվել է դռների և պատուհանների վերանորոգում, տրամադրվել է կոշտ և փափուկ գույք, կատարվել է ջեռուցման ներդրում ամբողջ շենքում: Գյուղապետարանի կողմից հատկացվել է ատամնաբուժական բազկաթոռ 700 000 դրամ արժեքով: Ավետարանչական եկեղեցու կողմից տրամադրվել է բիրքիմիական “Ստատֆաքս” ապարատ 1750 000 դրամի արժեքով: AMQOR-ից ստացվել է բժշկական պարագաներ և դեղորայք: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել է պատվաստանյութերի սառնարան, հոսանքի կարգավորիչ և գեներատոր 354 000 դրամի արժեքով: